ԱՆՏԻՊ ԷՋԵՐ ԱՐՇԱԿ ՖԵԹՎԱՃՅԱՆԻ ԱՐԽԻՎԻՑ

ՀՈՒՓՍԻՄԵ ԴԱՅԱՆ
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
Հայաստանի ազգային պատկերասրահ
hp.dayan@yandex.ru

ՀՏԴ՝ 7.071.1
DOI:10.54503/1829-4278.2023.2-48

Ամփոփագիր

Սույն հոդվածում առաջին անգամ ներկայացվում են Արշակ Ֆեթվաճյանի կյանքին և ստեղծագործությանն առնչվող արխիվային նյութեր, այդ թվում անտիպ, որոնք նորովի կբացահայտեն նրան որպես գիտնական, մտածող, հասարակական գործիչ և հայ մշակույթի հետազոտող: Նրա՝ Հայկական Լեռնաշխարհում դեգերումների արդյունք են շուրջ 2000 տարբեր աշխատանքներ Հայաստանի ավերակների ու հուշարձանների, հայ կանանց կերպարների և զարդանկարների մասին, որոնք 20-րդ դարի առաջին կեսին ներկայացվեցին Եվրոպայի, իսկ հետո՝ Միացյալ Նահանգների լավագույն ցուցասրահներում: Արշակ Ֆեթվաճյանը ականատեսն էր եղեռնյան և հետեղեռնյան ծավալվող դեպքերի, որոնց նկատմամբ իր վերաբերմունքը արտահայտել է ոչ միայն իր հոդվածներում. նա աջակցություն է կազմակերպել Եղեռնից փրկված որբերին ու կարիքավորներին: Այս հոդվածում ներկայացվում է նաև Ֆեթվաճյանի ամերիկյան շրջանի ստեղծագործական ձեռքբերումները, որպես մտածող, գիտնական, նրա հայրենիք վերադառնալու փափագը ու փորձերը: Հոդվածում տեղ են գտել նաև Ֆեթվաճյանին տրված գնահատականներն ու որակումները, որոնք առանձնացվել են գիտնական-արվեստագետի մասին Միացյալ Նահանգներում տպագրված հոդվածներից և նրա մասին հուշերից:

Բանալի բառեր. Արշակ Ֆեթվաճյան, 1915 թ. Հայոց ցեղասպանություն, Արշակ Ֆեթվաճյանը Միացյալ Նահանգներում, Հայկական Լեռնաշխարհ, հայ ճարտարապետական հուշարձանները կերպարվեստում, ջրաներկ, «Մանուկ Հայաստանի» կերպարը

«Գեղարուեստը կեանքի աղն է»

«Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»

Արշակ Ֆեթվաճյանը (1863–1947) եզակի արվեստագետ, գիտնական, մտածող էր: Նրա ստեղծագործական ներուժը, նորը բացահայտելու, ճանաչելու մշտարթուն ձգտումը, թողած ահռելի գիտական և ստեղծագործական ժառանգությունը բացառիկ են հայ արվեստում իրենց ծավալով և բնույթով: Արվեստագետի մահից հետո գիտական և ստեղծագործական աշխատանքները կտակի համաձայն հանձնվել են Հայաստանի ազգային պատկերասրահ, որտեղ Հուշաձեռագրային բաժնում պահվում են Ֆեթվաճյանի կյանքին, գիտական և ստեղծագործական գործունեությանը վերաբերող հարուստ նյութեր: Ֆեթվաճյանի ստեղծագործական ժառանգության որոշակի հարցերի ուսումնասիրությանն անդրադարձել են Գ. Չեմենյանը, Լ. Չուգասզյանը, Ա. Տեր-Մանուկյանը, Ռ. Շիշմանյանը և Բ. Երկանյանը[1] կատարելով կարևորագույն ներդրում վաստակաշատ արվեստագետի թողած ժառանգությունը հասարակության լայն շերտերին հասու դարձնելու համար:

Սույն հոդվածում առաջին անգամ կփորձենք ներկայացնել մեծ հայի կյանքը և ստեղծագործական ժառանգությունը՝ համաձայն պահվող փաստաթղթերի:

280-ամյա պատմություն ունեցող երզնկացի, ազնվական տոհմից սերված Արշակ Ֆեթվաճյանը նախնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում՝ «բանաստեղծական Տրապիզոնում»[2] և նկարել հինգ տարեկանից: «իմ պատանութեան երազ տարիները»[3] անցել են Կոստանդնուպոլսում՝ Ռոբերտս քոլեջում ուսանելիս, որտեղ նա տիրապետել է դասական հայերենին, ֆրանսերենին, թուրքերենին: Տասնինը տարեկանում Ֆեթվաճյանը դարձել է Կոստանդնուպոլսում բացված արվեստի կայսերական դպրոցի առաջին ուսանողներից: Նկարչությունում ցուցաբերած գերազանց արդյունքի համար արժանացել է մեդալի, իսկ բարձր դասարանում ստացել Աբդուլ Համիդի ամեն տարի Կայսերական դպրոց ուղարկած հիսուն ոսկուց իր բաժինը: 1887 թվա-

1 Տես Գրականության ցանկը:

2 **Ֆէթվաճեան Ա.,** «Մանուկ Հայաստան»-ի առթիւ, *Հայաստանի կոչնակ*, Նիւ Եորք, 29.09.1923:

3 Նույն տեղում:

կանին մեկնել է Իտալիա՝ Հռոմ, ընդունվել Արվեստի թագավորական ինստիտուտ, սովորել չորս տարի՝ մասնագիտանալով գեղանկարչության մեջ , սերտել իտալերեն ու տիրապետել նույնքան սահուն, որքան հայերենը և ապրել «առաջին երիտասարդութեանս բաբախուն խանդավառութիւնները»[4]: Հռոմում նշանակվել է Թուրքիայի դեսպանատան կցորդ, որի պաշտոնում ծառայել է երկու տարի[5]: 1892 թվին մեկնել է Վիեննա և մնացել այնտեղ մինչև 1895 թիվը: Այնուհետև՝ Ֆրանսիա, Գերմանիա, ապա՝ վերադարձ Ռուսաստան:

1896–1904 թթ. Ֆեթվաճյանն անցկացնում է Սանկտ Պետերբուրգում[6]՝ պարբերաբար այցելելով Բաթումի՝ մորը, որը մահացավ 1900 թվականին[7]: «1899-ի դեկտեմբերի վերջերին էր, երբ ես Պետերբուրգից եկայ առաջին անգամ Թիֆլիզ՝ մտադրութիւն ունենալով կազմակերպել այնտեղ իմ նկարների ցուցահանդէսը: Թիֆլիզում ես ոչ մի ծանօթ ունէի, անգամ հայերի մէջ»[8]: Արվեստագետն այնտեղ ծանոթանում է Կովկասի փոխարքայի՝ իշխան Գոլիցինի հետ, ով թագավորական ընդունելություն է կազմակերպում և ռազմական թանգարանում տարածք է տրամադրում, որտեղ Ֆեթվաճյանը հնարավորություն է ունենում վեց շաբաթ շարունակ ցուցադրելու իր աշխատանքները: Արվեստագետն ապշած էր այն ջերմ ու խանդավառ ընդունելությունից, որը նրան մատուցեցին Գոլիցինը և ամբողջ Թիֆլիսը[9]:

1900 թվականի հուլիսի վերջին պարոն Ֆեթվան, ինչպես ինքն էր իրեն անվանում[10], առաջին անգամ գալիս է Հայաստան: Ֆեթվաճյանը, հիշելով եվրոպական երկրների մայրաքաղաքներում ու բարձրաշխարհիկ հասարակությունում անցկացրած «լաւ բաները գնահատե-

---

4 **Ֆէթվաճեան Ա.,** «Մանուկ Հայաստան»-ի առթիւ...:

5 Noted Artist Complies Monumental Work, Fetvajian To Lecture On Archeology. By a staff correspondent of the Hairenik Weekly, *Hairenik Weekly,* Boston, 6.12.1935.

6 Ֆէթվաճյանը Պետերբուրգում հայտնի դարձավ որպես ջրաներկերի վարպետ, ընտրվեց «Արվեստագետների խրախուսման Կայսերական Միության» անդամ և մասնակցեց ռուս ջրանկարիչների ցուցահանդեսներին: Տես **Basmadjian K. J.,** Un maitre arménien, Archag Fétvadjian, L'orient illustre, Paris, 25.07.1929.

7 Noted artist complies...:

8 **Ֆէթվաճեան Ա.**, Իմ հանդիպումները Խրիմեանի հետ (I), *Հայրենիք,* Պոսթոն, 13.11.1932:

9 Noted artist complies...:

10 Paintings in the Metropolitan work of famous artist who won distinction in Europe. *Leominister daily enterprise,* Leominster, Mass., 18.5.1929.

լու կարողութեանա հասունութեան տասնեակ այլ տարիներ», նշում է, որ «բոլորը, բոլորը խունձցան, գորշցան միանգամայն 1900-ի Յուլիս ամսի այն յաւէտ անմոռանալի գեղեցիկ առաւօտից, երբ «Թիֆլիզ-Ալեքսանդրոբոլ» գնացքը, հեւ ի հեւ վերելքով, անցաւ Զորագետի դիւթական հովտէն եւ կանգ առաւ Շիրակի դաշտում»[11]: Օտար ափերում կրթված, ապրած և գործունեություն ծավալած 36 տարեկան երիտասարդի մեջ «ձայն տվեց Հայի արժանապատուութիւնը, ինքնայարգութիւնը»[12]: Նա որոշում է վեր հանել հայության արժեքները իմացողների և չիմացողների համար և հետևելով իր մեծ ուսուցչի՝ պրոֆեսոր Չեզարե Մաքքարիի խորհրդին՝ «Եվրոպա վերադառնալիս բերել իրենց մեր երկրից այն, ինչ որ մերն է և արևմտյայք դեռ չէին գիտցել»[13], որը ոչ նրանից առաջ, ոչ հետո ոչ մեկը չարեց:

Երեք ամիս շարունակ Մխիթարյան երկու վարդապետների ընկերակցությամբ[14] ճամփորդում է Էջմիածին, Կարս, Անի, Արագած՝ նկարելով մինչև XIII դարի հուշարձանների բազմաթիվ՝ ընդհանուր առմամբ 2000 մատիտանկար, ջրանկար, ճեպանկար: Քսանհինգ տարվա բացակայությունից հետո Հառիճավանքում հանդիպում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին[15]: Այս հանդիպումից հետո Ֆեթվաճյանն ավելի է համոզվում իր առաքելության մեջ և խոստովանում, որ օտարության մեջ իր տեսած, ապրած բոլոր բաները նրան ավելի հեռու են սկսում թվալ, և նա հստակ սկսում է գիտակցել, թե որն է մերը և որը ուրիշինը: Հայաստան ճամփորդելը շրջադարձային եղավ Ֆեթվաճյանի կյանքում. սկսվում է նրա հայագիտական ու հնագիտական ուսումնասիրությունների շրջանը: Յուրաքանչյուր տարի նա շրջում է Արևելյան Հայաստանում «առանց յոգնելու, առանց տրտնջալու, բոլորովին

11 **Ֆէթվաճեան Ա.,** «Մանուկ Հայաստան»-ի առթիւ...:

12 **Մանուէլեան Ա. Տ,** Նկարիչ Արշակ Ֆետվաճեան, Արշակ Ֆէտվաճեանի կենսագրութիւնը, Պարոն Ֆէթվաճեանի գեղարուեստից ուսումնարանի վերջին տարին եւ իր բարերարը, Պեյրութ, Տպարան Սեւան, 1966, էջ 52:

13 **Ֆէթվաճեան Ա.,** Կ. Խաչ պատմութեան համար (Կ. Խաչի 25-ամեակի առթիւ), *Հայրենիք,* Պոսթոն, 06.03.1935:

14 Հ. Գաբրիել վարտապետ Նահապետեան և Հ. Սարգիս Յովսոյեան (Հ. Դ.)

15 «Այդ ինչպէս է որ տասնեակ տարիներ Եւրոպաները, հեռաւոր Ռուսաստանները ոտի տակ տուիր ու մէկ անգամ չմտածեցիր գալ Էջմիածին: Ես սպասեցի շատ, եւ յուսացի, որ օր մը կուգաս: Ես քեզի պէտք ունիմ»: Աղբյուրը՝ **Ֆէթվաճեան Ա.,** Իմ հանդիպումները...:

մինակ, ապաւինելով միայն իր ուժերուն եւ աղբիւրներուն, ուսումնասիրելու, նկարելու կամ գծագրելու համար, անհուն համբերութեամբ, բծախնդիր ճշգրտութեամբ: 1900-ի և 1901-ի ամառները մասնաւորապէս ճամբորդեցի Ռուսական Հայաստանի մի կարևոր մասը: Յատուկ նպատակս էր փնտռել և գիտենալ, թէ ժամանակին «հայ քաղքենու» և «հայ արիստոկրատի» բնակարանները ինչպէս մի բան են եղել: «Հայ գիւղացու տունը ամեն տեղ անփոփոխ այնպէս է մնացել՝ ինչպէս որ Քսենոփոն իր համբաւաւոր «Տասն հազարից նահանջի» մէջ նկարագրած է 2000 տարիներ առաջ...: Հետաքրքվողներուն կը յանձնարարեմ կարդալ մեր երիտասարդ գիտնական Մեսրովբ վարդապետ Տէր-Մովսէսեանի «Հայ գիւղական տունը» գրվածքը, տպված 1892-ին Վիէննայի Մխիթարեանց մօտ[16]: Ուղևորության ընթացքում նա կանգ է առնում Ալեքսանդրապոլ, Կարս, Երևան քաղաքներում, Շիրակի, Արագածոտնի, Ապարանի դաշտերում և Արարատյան դաշտավայրում, «որոնց մէջ բնաւ մի հին «մասնաւորի բնակարան» թէկուզ աւերակ, չի կայ»[17], ուսումնասիրում է գյուղերում, մերձակայքում առկա յուրաքանչյուր խոնարհված հուշարձան[18]: 1901 թվականի ամռանը ազգագրական ուսումնասիրության նպատակով Ֆեթվաճյանը, Արագածի լանջերին թափառելով, հանդիպում է իր «Սասունցի կինը» («Մանուկ Հայաստան»՝ 89x109 սմ, թուղթ, ջրանկար) ստեղծագործության հերոսուհուն: «Վեհօրէն հոյակապ մի աղջիկ: [...] Հուժկու ինչպէս մի էգ վագր, առողջ ու մեծղի կնոջ մարմնին յատուկ շնորհալի մի դիրքով գրաւիչ՝ թէք ընկած էր նա քարափի եզերքին մի յարմար տեղ եւ, դիեցնում էր մի՝ իրեն համապատասխան անուշիկ փափլիկ կորիւն, մի մանչ՝ աւելի հրաշագեղ քան ես կարողացայ արտայայտել իմ նկարում: Մնց ու դարձի տեղ չէր այնտեղ եւ իմ անսպասելի երեւումից նա հաւաքուեց առանց հեռացնելու երախայն իւր կենսալի կրծքից»[19]: Մանկանը կրծքին սեղմած, ամեն ինչ կորցրած սասունցի դյուցազնուհին խորհրդանշում է հանուն իր ապագայի ոտքի ելած ժողովրդի ազատագրական պայքարը[20]: Նկարը վրձնեց 1903

16 **Ֆեթվաճեան Ա.,** Գեղարուեստը հայերի մէջ, *Մշակ,* Թիֆլիս, 04.07.1902:

17 Նույն տեղում:

18 «Ֆեթվաճեանի Կենտրոնական Յոբելյանական հանձնախումբը Նյու Յորքում գրեց Ֆեթվաճեանի գործի կարևորությունն ու նշանակությունը», պատճեն, ՀԱՊ, Հուշաձեռագրային բաժին, Ֆ.144, ինվ. 39901:

19 **Ֆէթվաճեան Ա.,** «Մանուկ Հայաստան»-ի առթիւ...:

20 ԵՊՀ հայագիտության հետազոտությունների ինստիտուտ, Հայոց ցեղասպա-

թվականին, իսկ 1905-ին իր բարեկամ Հովհաննես Վարդ-Պատրիկյանի աջակցությամբ Վիեննայում տպագրեց գունավոր բացիկներ, որոնք նորություն էին այդ ժամանակ:

Մինչ Ֆեթվաճյանը կրթություն էր ստանում իր ժամանակի առաջադեմ կենտրոններում և շրջագայում հայրենիքում՝ Օսմանյան կայսրությունում նախապատրաստվում էր 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Պարբերաբար վերադառնալով Կոստանդնուպոլիս՝ նա ականատես էր լինում, թե ինչպես է ամբողջ կայսրության տարածքի հայոց դպրոցներում արգելվում հայոց պատմության, աշխարհագրության դասավանդումը. այդ առարկաներին նվիրված գրքերը բռնագրավվում էին, այրվում, իսկ ուսուցիչներին ու հեղինակներին ենթարկում պատժի՝ որպես ոճրագործների[21]: Արվեստագետն անհանգիստ հետևում էր իր հայրենիքից ստացվող լուրերին, տեսնում, թե ինչ է այնտեղ կատարվում, ինչ օրհասական վիճակում են հայտնվել իր հայրենակիցները և իրեն պարտավոր էր զգում օգնել ազգակիցներին: 1906 փետրվար և մարտ ամիսներին Օդեսայում Ֆեթվաճյանը հանդես է գալիս որպես հասարակական գործիչ, ում ելույթը և խոսքը վարակիչ եռանդ են առաջացնում իր հասակակից և ավելի երիտասարդ տեղացի մտավորականների շրջանում: Նա, Օդեսայի հայկական եկեղեցու քահանայից ստանալով բոլոր հայերի անուններն ու հասցեների ցուցակը, այցելում է նրանց, ներկայացնում իրավիճակն ու կազմակերպում է հանդերձանքի կամ կտորեղենի ձևով նվիրատվության հավաքագրումը՝ բացառելով որևէ դրամական օգնություն: Հայ շնորհալի տիկինները և օրիորդները ստացված կտորեղենից կարում են հագուստ: Արդյունքում «իրենց ձեռքերով եւ սեփական կարի մեքենաներով ձեւեցին ու կարեցին նոր կտորեղէնէ երկու հազար ձեռք հագուստ ամէն հասակի կանանց, աղջիկների եւ երեխայոց յատուկ: Սրանց վրայ պէտք է աւելացնել 200 կտորի չափ պատրաստ եւ գործածուած զգեստներ տեսակ, տեսակ մը ապա 300 զոյգ էլ կօշիկներ: Այս ամէնը տիկին Ունանեանի տանն իսկ դասաւորուեցին եւ 11 արկղներին մէջ փակուած ուղարկեցին

նության հանրագիտարան http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_Fetvachyan_Arshak (վերջին այցելությունը՝ 24.11.2023)

21 **Կիրակոսյան Զ.,** *Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ,* գիրք 1-ին, Երևան, «Հայաստան» հրատ., 1982, էջ 24:

իսկոյն (ի հարկէ ապահովագրուած) Թիֆլիզի թեմի առաջնորդ Սաթունեան արքեպիսկոպոսի անունով առանձին խնդրագիր նամակով, որպէսզի անյապաղ բաշխուին աղէտեալների մէջ կարօտներին»[22]:

1914–1915 թվերին Ֆեթվաճյանը ցանկանում էր «զուտ հայ ազգ. գեղարուեստի՝ հինի թէ նորի՝ մասունքների մի թանգարան ստեղծել Էջմիածնում, որի շուրջ հանդիպումներ էր ունեցել Կարապետ եպիսկոպոսի հետ, իր մտերիմ 4–5 միաբանակիցների և մայրաքաղաքներից եկած 3–4 պատգամաւորների հետ և մեկ պատվելի Հայ Տիկնոջ հետ, ով մտադրուել էր մի 3.000 ռուբլի աջահամբոյր տալ կաթողիկոսին» [23]: Օրեր անց Ֆեթվաճյանը առաջարկում է Գևորգ Բաշինջաղյանին և Եղիշե Թադևոսյանին հանդիպել, քննարկել այդ նախաձեռնությունը: Յուրաքանչյուրը մշակում է թանգարանի իր նախագիծը, որոնցից անցնում է Ֆեթվաճյանինը: Այն ընդհանուր հավանության արժանացավ, վավերացվեց, բայց այդպես էլ կյանքի չկոչվեց:

1914 թվին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Անխոնջ նվիրյալի հայրենիքում բնակչությունը տառապում էր սովից և համաճարակներից: Շուկայից, վաճառատնից և արհեստից ոչինչ չէր մնացել: Խանութները և աշխատավայրերը փակվեցին: Երկիրը գտնվում էր խիստ ողորմելի վիճակում: Հաց մուրացողների թիվ ու սահման չկար[24]: Հայ ժողովուրդը 1917 թվականը թևակոխեց ջարդված ու բզկտված, անթիվ ու անհամար որբերով, տեղահանված և ռուսական հող հասած ու տարբեր վայրերում սփռված 300–350 հազար գաղթականությամբ[25]: Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը 1918 թվականի ամբողջ ընթացքում երկրի ներքին և արտաքին բարդ իրադրության պայմաններում բոլոր միջոցներով ձգտում էր թեթևացնել հայ ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակը: Օսմանյան կայսրության փլուզումից հետո էլ հարյուրավոր որբեր վեց ամիս դեռ անօթևան մնացին Էջմիածնի ու Վեհարանի պատերի տակ, որն անհնար էր վրձնով փոխանցել[26]: Ֆեթվաճյանը, որպես մտածող և հասարակական գործիչ

---

22 **Ֆէթվաճեան Ա.,** Կ. Խաչ պատմութեան...:

23 Ազգային գեղարուեստի թանգարան, *Հորիզոն,* Թիֆլիս,17.12.1915:

24 **Կիրակոսյան Ջ.,** *Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ*, գիրք 2–րդ, Երևան, «Հայաստան» հրատ., 1983, էջ 8–9:

25 **Կիրակոսյան Ջ.,** *Երիտթուրքերը պատմության դատարանի* ..., գիրք 2–րդ, էջ 881:

26 **Ֆէթվաճեան Ա.,** Ի խորոց սրտի, *Զանգ,* Երեւան, 5.1.1919:

իր հոդվածներից մեկում կիսվում է իր հուշերով, նկարագրում սովամահ եղող մարդկանց ու նրանց նկատմամբ վերաբերմունքն Էջմիածնի հարակից գյուղերի ու քաղաքների բնակիչների կողմից[27]: 1920-ի ապրիլի 18-26-ը Սան-Ռեմոյի Դևաշան ապարանքում գումարվեց Անտանտի տերությունների գերագույն խորհրդի նիստ, որտեղ քննարկվեցին Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի կնքման, տարածքային հարցեր, այդ թվում Հայաստանին վերաբերող մանրամասներ: Նախա-

27 Ահա թե ինչ է փաստում արվեստագետը. «Վեց ամսի բաց երկնքի տակ անսաղութիւնից էլ ճիւաղի կերպարանք ընդունած ուրուականներ, որոնք թուք էլ չունեն կուլ տալու, և որոնց՝ այժմ էլ՝ ցուրտը խռնել է մէկ մէկի վրայ Վանքի ու Ճեմարանի յարակից զանազան անդուռ ու անպատուհան «խանիխարաբա»ներում, ու, նոքա... մեռնում են, վերջապէս: Շատերը չունին էլ ոչ մի մերձաւոր բացի իրենց հարևանը և նմանները, որ դուրս բերում են մահացածների դիակները, թողնում պատի տակ, անցուդարձի, դռների առաջ, ճանապարհի վրայ, ուր, մնում են նոքա սատկած դրութեան մէջ օրերով... Չգիտեմ ով հնարում է լեգենդաներ, ըստ որում այստեղ Էջմիածնում թշառ փախստականներին իբր տրւում են ամեն կերպ պաշտպանութիւն և խնամք: Եւ ահա՝ քաղաքի չափ կարեւորութիւն ստացած Աշտարակը, որ քշում է խեղճերին դէպի Օշական, Օշականն նոյնչափ փոյթեռանդութեամբ՝ Վաղարշապատ, ուր, հարստացած, չտեսած ունևորութիւնների տէր դարձած «ազատ հայերը» հացով, դոշաբով, գինիով և այլ Աստուծոյ բոլոր բարիքով լիացած, կուշտ ու կուռ, չեն էլ նայում, թէ ինչպէս մերկ քաղցածները փողոցներով անցնելիս մէկ մէկ կանգ են առնում ու թոնրից նոր դուրս բերած լաւաշի օդի մէջ ծաւալւող անուշահոտութիւնը վայելելու համար պինչերն ու աչքերը մեծ-մեծ բացած բերանները ջրակալած դէս ու դէն նայում ու արցունքը արմուկով սրբում...: Ամառն ի բուն և ամբողջ աշունքը Էջմիածնի և Ճեմարանի բակերը համայնատարած բացօդեայ արտաքնոցներ էին, և այդ գարշանքին վարժ հայ գեղջուկի աղտեղութիւնը առաւելապէս լրացնում էր Ճեմարանի և յարակից շինութիւնների մէջ տեղաւորւած զինւորութիւնը: Անչափ թշառութեան մէջ շշմած, քաղցի ճանկերում գալարւող մնացուկը որբերի ու եղկելիների՝ այդ ապականութիւնով ծածկած գետինը կտցփորելով զանազան հատիկներ, կորիզներ և էլ չգիտեմ ինչեր ասես գտնում ու հապճեպ բերանը դնում էր հաւերի երանութեան աննկարագրելի մի արտայայտութիւնով: Փախստականների վերադարձի սկսելուն հետ անտէր երեխաների «վայելք»ի այդ աղբիւրն էլ ցամաքեց. իսկ նոյեմբերի վերջին կէսից սկսած երկարատև անձրևներից յետոյ, երբ թշառներին թխմեց Ճեմարանի շինութեան մէջ, վերջապէս, ձիւնը եկաւ, առ ժամանակ ծածկւել էին նողկանքի հրապարակները: Չէ՛, ոչ մի լեզւով չի կարելի ասել, թէ ինչպիսի՛ սրտակտուր տեսարան է ողջ – մեռել մերկ մանուկների համախռնումը Ճեմարանի խոհանոցի վերնայարկը լերկ տախտակամածի վրայ, ուր նրանց հաւաքել են ձմրան ցրտին արհաւիրքից պատսպարելու համար, ուր նրանք հինգով, տասով մահանում են ամեն օր...» (կրճատումներով): Աղբյուրը՝ **Ֆէթվաճեան Ա.,** Ի խորոց սրտի...:

զահ Կլեմանսոն, ամփոփելով նիստը, եզրակացրեց. «Ֆրանսիան ոչինչ չի կարող անել, ներկայումս Ամերիկան ևս ոչինչ չի կարող անել: Մնում է տեսնել որպես արդյունք այս ամենի, արդյոք հայերը կմնան»[28]:

Եվ այո, մնացին:

Ֆեթվաճյանը շարունակում էր ցուցահանդեսներ կազմակերպել Եվրոպայում՝ ներկայացնելով իր գեղանկարչությունը, որ ստեղծել էր Հայկական Լեռնաշխարհում տարիներ շարունակ իր դեգերումների ընթացքում: Այսպես, 1919 թվին, Փարիզում տեղի ունեցավ Ֆեթվաճյանի մի քանի ցուցահանդես, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության պատվիրակության դահլիճներում: Ցուցահանդեսներում ներկայացված էին հայ կանանց կերպարների՝ զարդերով, մեղմ գույներով, տարազներով, մետաքսյա, արծաթաթել, ոսկեթել ասեղնագործությամբ, ինչպես նաև Հայաստանի VI –XIII դդ. քրիստոնեական կոթողների՝ հայ ճարտարապետությանը վերաբերող հուշարձանների ու ավերակների բեկորների և նախշազարդերի յուղաներկով, ջրաներկով, կավճամատիտով, ածուխով, մատիտով և թանաքով[29] կատարված շուրջ 200 աշխատանքներ: Հաջորդ ցուցահանդեսի կատալոգի առաջաբանը հեղինակեց մեծանուն բյուզանդագետ, քրիստոնեական գեղարվեստի գիտությունների հայտնի բանասեր, ակադեմիկոս Շարլ Դիլը: Այդ ցուցահանդեսների մասին ֆրանսիական մամուլը հիացմունքով է արտահայտվել՝ նշելով, որ ցուցահանդեսը հատկապես արժեքավոր ու գնահատելի է «հայրենիքի համար այդ տխուր ու սև օրերին»[30], քանի որ գրավել էր համաշխարհային արվեստի քննադատների ուշադրությունը ու շատ բարձր գնահատվել նրանց կողմից: 1920 թվականի ապրիլի 5-ին Լուվրի Մառսոնի առանձին ցուցասրահում բացվեց ևս մի ցուցահանդեսը: Փարիզում այդ տեսակ պատվի դեռ ոչ մի հայ նկարիչ չէր արժանացել: Հետայսու մնացած բոլոր ցուցահանդեսներին Ֆեթվաճյանի միակ ցանկությունն էր հրատարակված տեսնել իր ներկայացրած աշխատանքները, որպեսզի այն համայն քաղաքակիրթ աշխարհի սեփականությունը լինի: Ֆեթվաճյանի արվեստը բարձր է

---

28 **Կիրակոսյան Ջ,** *Երիտթուրքերը պատմության դատաստանի…*, գիրք 2-րդ, էջ 277:

29 Exposition Fétvadjian, *Bulletin arméniene,* Paris, 15.10.1919.

30 **Տէր-Գրիգորեան Ռ.,** Ա. Ֆեթվաճեանի ցուցահանդէսը Պարիզում, *Նոր աշխատաւոր,* Թիֆլիս, 23.06.1920:

գնահատել նաև ֆրանսահայ խոշոր արվեստագետ Ռաֆայել Շիշմանյանը, նշելով, որ Ֆեթվաճյանը «Ջրանկարիչներու Միջազգային Միութեան» միակ հայ անդամն է, միակ հայ բացառիկ ջրանկարիչը, որն ամենաերկարակյացն է այս մասնագիտության մեջ[31]: Հիշեցնենք, որ Ֆեթվաճյանի ջրանկարչական աշխատանքներից է նաև Հայկական լեռնաշխարհի տարբեր նահանգներին բնորոշ հայ կնոջ տարազների գունավոր բացիկների շարքը, որոնք մեծ ժողովրդականություն էին վայելում դրանց լույս ընծայումից սկսած: Փարիզից հետո, նույն ցուցահանդեսով նա հանդես եկավ Մեծ Բրիտանիայում՝ Լոնդոնում և Քենսինգթոնում, Վիկտորիա և Ալբերտ թանգարանում, վեց ամիս շարունակ՝ 1921 թվականի նոյեմբերի 8-ից մինչև 1922 թվականի հունվարի 15-ը:

Ֆեթվաճյանի շնորհիվ Հայաստանի առաջին Հանրապետությունն ունեցավ իր նամակադրոշմներն ու թղթադրամները, որոնց տպագրությունը սկզբում փորձեցին կազմակերպել Երևանի և Էջմիածնի տպարաններում, այնուհետև Թիֆլիսում, բայց անարդյունք: Ի վերջո 1920 թվականին գործը վստահվեց Փարիզի Հայաստանի պատվիրակությանը, որը բոլոր ջանքերը գործադրեց այն հաջողելու համար: «Փարիզի Հայաստանի պատվիրակությունը քանի մը անյաջող դիմումներէ ետք հայ արուեստագէտներու մօտ դրոշմներու գծագրութեան կամ նկարման գործը յանձնուած է յայտնի եւ բազմավաստակ նկարիչ Ա. Ֆէթվաճեանի, որ երկու շաբաթէն նկարած է զանոնք, ի մեծ զարմանս Պատուիրակութեան»[32]: Հայաստանի պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի ստորագրությամբ և մակագրությամբ հայկական դրոշմները հանձնվեցին տպագրության[33]: Ընդհանուր առմամբ 10 անվանական արժեքով թղթադրամներ[34] էին և տպագրվեցին ընդամենը 1.200.000 կամ 1.300.000 օրինակով[35]՝ մեծ ու փոքր Մասիսների նկարով և ջուլհակագործ կնոջ պատկերով:

---

31 **Շիշմանեան Ռ.,** Ջրանկարիչներու միջազգ. ընկերութեան ցուցահանդէսը, *Վերածնունդ,* Փարիզ, 30.10.1920:

32 **Վերածին Մ.,** Հայաստանի նամակադրոշմներն եւ Ա. Ֆէթվաճեան, *Հայ Վաստակ,* Պոսթոն, 08, 05.1932:

33 Նույն տեղում:

34 1 ռուբլի, 3, 5, 10, 15, 25, 40, 50, 70 և 100 ռուբլի անվանակարգով: Տես **Վերածին Մ.,** Հայաստանի նամակադրոշմներն...:

35 **Վերածին Մ.,** Հայաստանի նամակադրոշմներն...:

Առաջին Հանրապետության հաստատումից հետո Ֆեթվաճյանը, որով երկար տարիներ ապրել էր հայրենիքից հեռու, որպես մտավորական, որպես հայրենասեր, որպես հասարակական գործիչ՝ մեծ հույսեր էր կապում օտար ափերից հայրենակիցների՝ հայրենիք վերադառնալու գործընթացի հետ: Նա համոզված էր, որ «գաղութներում իւր գոյնն ու նկարագիրը, իւր ազգագրական բնորոշութիւնները, իւր դիմագծի ուրոյն գրաւչութիւնը կորցնող հայերը նորէն հայացնելու գործում, նոր դաշնակցութիւնը պիտի ջանայ՝ իրեն տրամադրած ամեն միջոցներով ճամբի բերել մոլորածներին: [...] Հայեր, հայ յեղափոխութիւնը չի վերջացաւ. Հարկաւոր է մի նոր դաշնակցութիւն, մի փրկութեան բանակ գաղութներում հալւող կորչող, հայ ցեղի անունի վարկը ստորացնող հայութիւնը նորից հայացնելու համար»[36]:

«Այս անախորժ, տխուր ու անհրապոյր անկիւնը»

Ֆեթվաճյանը Միացյալ Նահանգներ՝ Նյու Յորք, եկավ 1922 թվականի օգոստոսին և մտադիր էր մնալ երեք ամիս[37]: Հոկտեմբերին արվեստագետ – գիտնականը հանդես եկավ երկշաբաթյա ցուցահանդեսով Կոլումբիայի համալսարանի «Avery» ճարտարապետության գրադարանի ընդարձակ սրահում, իսկ 1923 թվին «Renaissance Society» հրավերով և հովանավորությամբ Չիկագոյի համալսարանում, որտեղ նվիրյալ մտավորական – արվեստագետի աշխատանքները «ամէնէն անարուեստ հոգիին իսկ աչքերը կը բանան»[38], այնուհետ «College Art Society», մասնավոր հրավերով Փրինսթոնի համալսարանում[39]: Եվրոպայում կայացած ցուցահանդեսները մեծ արձագանք են գտնում նաև Միացյալ Նահանգների հայալեզու մամուլում: Ֆեթվաճյանին անվանում էին «մեկ այլ մեծ քաղաքակրթության Պավսանիաս, ով միավորել է իրերի անզուգական հավաքածուն, ջրաներկով կամ մատիտով արձանագրում է իր հայրենի երկրի հիասքանչ ճարտարապետությունը,

36 **Ֆէթվաճեան Ա.,** Մենք մեզ պիտի օգնենք. Հայ յեղափոխութիւնը չի վերջացաւ. Գ., *Յուսաբեր,* Գահիրէ, 5.08.1920:

37 Arshag Fetvadjian to Visit America, *The Christian Science Monitor*, USA, 3.08.1922.

38 Հայ տաղանդը եւ գեղարուեստը Շիքակոյի համալսարանին մէջ, *Հայաստանի կոչնակ,* Նիւ Եորք, 29.09.1923:

39 Ֆեթվաճեանի Կենտրոնական Յոբելյանական հանձնախումբը Նյու Յորքում գրեց Ֆեթվաճեանի գործի կարևորությունն ու նշանակությունը, պատճեն, ՀԱՊ, Հուշաճեռագրային բաժին, Ֆ.144, ինվ. 39901:

ոչ միայն մեծ վարպետությամբ և նրբանկատությամբ, այլև լիովին, ամբողջական մեկնությամբ»[40]:

Ֆեթվաճյանի կյանքի ամերիկյան շրջանը (25 տարի) գլխավորապես նվիրված էր նախորդ տասնամյակների նրա գիտական և արվեստագիտական, հայանպաստ գործունեության բեղուն աշխատանքները ամերիկահայ գաղութին և օտարերկրացիներին ներկայացնելուն:

Իր ազգի պես «ընդ հուր եւ ընդ ջուր»[41] անցած մտավորականը հրաշալի գիտակցում էր իր կատարած աշխատանքի համաշխարհային արժեքը և Միացյալ Նահանգներում իր գիտական հետազոտություններով հանդես էր գալիս դասախոսություններով՝ անգլերեն, ֆրանսերեն, Հարվարդի, Փրինսթոնի, Կոլումբիայի համալսարաններում սև-սպիտակ և գունավոր լուսապատկերների ուղեկցությամբ: Հարվարդի համալսարանի «Fogg» արվեստի թանգարանի տնօրինության հրավերով մեծավաստակ Ֆեթվաճյանի դասախոսության ունկնդիր ուսանողները նկարների ցուցադրության ընթացքում փորձում էին ընդօրինակել իրենց ձեռքի տետրերում վարպետի աշխատանքների գծերն ու գեղեցկությունները: «Որքան օտարներու, նոյնքան և մեր մտքին, ամեն ինչ որ հայկական է միշտ ալ զուգորդուած է՝ մռայլին ու տխուրին հետ: Պ. Ֆէթվաճեան իր խօսքով ու նկարներով պիտի ապացուցանէ, թէ որքան սխալ է այդ կարծիքը կամ տպաւորութիւնը: [...] Ֆէթվաճեան իր խօսքով ու նկարներով՝ հայ հոգիի այդ մաքրամաքուր լոյսն է որ պիտի բերէ մեր լուսակարօտ հոգիներուն»[42]: Բանասէր-նկարչի[43] դասախոսությունները հանրամատչելի չէին, պահանջում էին հիմնարար գիտելիքներ «իրենց հայութիւնովը հպարտ հայերից». դասախոսության ավարտին ներկաները խոստովանում էին, որ «հիմա աւելի լաւ հայ եղանք»[44]:

Ամերիկահայ մամուլը ամեն կերպ քաջալերում էր ներկա լինել Ֆեթվաճյանի դասախոսություններին, ցուցահանդեսներին, քանի որ դրա շնորհիվ ներկաները գիտակցում էին, «որ նա գալիս է մեծ ռազմիկնե-

---

40 Armenian Architecture, *Glasgow Herald,* Glasgow, 10.11.1921.

41 **Պետիկեան Ա. Ա.,** Ֆէթվաճեանի «Նուիրաբերութիւնը», *Պայքար,* Պոսթոն, 27.06.1947:

42 Պ-ն Ա. Ֆէթվաճեանի դասախօսութիւնը, *Հայրենիք,* Պոսթոն, 18.12.1924:

43 Շնորհաւորելի աշխատասիրութիւն մը. մագաղաթի վրայ հայ ձեռագիր գիրքերու գեղարուեստը, *Հայրենիք,* Պոսթոն, 10.1927:

44 Ամերիկահայ կեանք, մի՛ փախցնէք առիթը, Ֆիլատելֆիայի հայերու ուշատրութեան, *Հայրենիք,* Պոսթոն, 08.10.1934:

րի ռասայից, մեծ ճարտարապետությամբ, գիտությամբ և հնարամտությամբ[45], իսկ Ֆեթվաճյանն ամենադժվար ժամանակներում «ինքնավստահութեան եւ առնական ինքնամփոփումի ուժ մը կը ներշնչէ մեզի»[46]:

Արշակ Ֆեթվաճյանի 2000 հասնող մատիտանկարները մի քանի անգամ փորձել են հրատարակել, բայց նույնիսկ ձևավորված անվանական հանձնաժողովին դա չհաջողվեց, ոչ էլ գտնվեցին առանձին բարերարներ այդ հայանվեր, անձնուրաց աշխատանքը ներկայացնելու: «Մինչեւ հիմա Փարիզի, Լոնտոնի, Նիւ Եորքի եւ Շիքակոյի մէջ եղած ցուցահանդէսներուն վրայ Փրինսթընի համագումարը կ'աւելնայ ապացուցանելու թէ ինչպիսի անհրաժեշտութիւն է Ֆէթվաճեանի գործերուն հրատարակութիւնը, ու հաւաստիք մը թէ այն արդարեւ պիտի ըլլայ արժէքաւոր նպաստ մը քաղաքակրթութեան եւ գեղարուեստի պատմութեան մէջ»[47]: Առանձին ուշադրության էր արժանանում ամերիկահայ գաղթօջախի կողմից Ֆեթվաճյանի «Մանուկ Հայաստան» աշխատանքը, որը, ըստ ամերիկահայ պարբերականներից մեկի, «շատերու է ներշնչեր կորով եւ խրախոյս[48], հայ ցեղի արժանաւոր զաւակ մը, վրձնի հոյակապ վարպետ իր «Մանուկ Հայաստան» անունով մեծադիր նկարի ցուցադրութիւնը նպատակ ունի հայ ազատագրութեան նուիրական խորհուրդէն փշրանք մը տալ ամէն հայ տունի եւ ամէն հայ հոգիի, որովհետև գաղութներու մէջ մանաւանդ մենք առհասարակ զրկուած ենք այսպիսի ազգային ներշնչումներէ, եւ առաւելապէս պէտք ունինք այդ կարգի նկարներու: Ցեղը ապրեցնելու համար հացը եւ ջուրը միակ էականը չեն, անոր հոգին՝ այդ անմահ հոգիին երգիչները կենսական արժէք ունին: Նկարիչ Ֆեթվաճեանի Մանուկ Հայաստանը ամեն հայու տուն եւ անհատ պարտաւոր է ունենալ»[49]: Արվեստագետը նախաձեռնեց իր ստեղծագործության տպագիր տարբերակը 2 դոլարով վաճառել: Ահա թե ինչպես էր մեկնաբանում Ֆեթվաճյանը իր նախաձեռնությունը. «որպէս հայ արուեստագէտ՝ վաղուց է որ սրտի

45 Fetvajian gives colorful lecture to A.R.F. students, *Hairenik Weekly,* Boston Mass., 20.12.1935:

46 Հայկական ճարտարապետութիւնը եւ Պ.Ա. Ֆէթվաճեանի գործերը, *Հայրենիք,* Պոսթոն, 01.01.1925:

47 Քալանթար Նալբանդեան Վ., Ֆէթվաճեան ամերիկացիներու մէջ, *Հայաստանի կոչնակ,* Նիւ Եորք, 12.01.1924:

48 **Վաղարշ Վ.,** «Մանուկ Հայաստան», *Հայաստանի կոչնակ,* Նիւ Եորք, 30.06.1923:

49 Նկարիչը եւ «Մանուկ Հայաստան», *Նոր օր,* Ֆրեզնո, Ալտադենա, 03.07.1923:

ցաւով կը տեսնէի՝ ամէն տեղ՝ հայ տունը զուրկ մեր իսկական հայացի նկարի զարդարանքներէն: Ես ալ չունենալով սովորութիւն կրկնել միեւնոյն նկարը, առ հասարակ շատ քիչներին մատչել եմ եղել եւ մեր ազգային լայն խաւերը չեմ կրցած հաղորդակից ընել իմ ապրումներու եւ զիս ոգեւորող մտքերու: Օգտուելով տպագրական արուեստի ընծայած դիւրութիւններէն ահա տուի իմ հայ ապրումների մէկ նկարը»[50]: Այս ստեղծագործությունը ներկայացնում է հայ կնոջ, հայուհու հավաքական կերպար՝ ինքնապաշտպանության բնազդի, անվախության, դիմադրության, հաստատակամության, մայրական գորովի, անվախության, դիմադրության, քաջության, առույգության, հաղթանդամության խորհրդանիշ[51]:

1932 թվականին «20th century club» ցուցասրահում ճարտար և հմուտ նկարիչը ներկայացրեց 37 աշխատանք, որը, ինչպես նկատեց ամերիկահայ մամուլը, «միայն մէկ փոքրիկ մասն է այն նկարներուն, զոր տարիներէ ի վեր անընդհատ կը գծէ Ֆէթվաճեանը՝ կաթիլ առ կաթիլ իր աչքերուն լոյսը եւ մտքին ու հոգիին բոլոր շնորհները քամելով անոնց վրայ»[52]:

1923 թվականին Նյու Յորքում կազմվեց «Ֆեթվաճյանի հոբելյանական կենտրոնական հանձախումբ»՝ տոնելու հայ գեղարվեստի սյուներից մեկը[53] համարվող արվեստագետի քառասնամյա հոբելյանը, ով «20 ամբողջ տարիներ բացարձակ անձնուրացութեամբ իր տաղանդն ու արուեստը գործածած է մեր ազգի նուիրական հնութիւններն ու կանգուն յիշատակարանները նկարելու ու ատով յաւերժացնելու անոնց պատմական կեանքն ու նշանակութիւնը»[54]: Այդ հանձնախումբը բաղկացած էր ամերիկահայ գաղութի բոլոր խավերի ներկայացուցիչ-

---

50 Նկարիչ Ֆէթվաճեանի «Մանուկ Հայաստանը», *Պայքար*, Պոսթոն, 06.15. 1923:

51 **Վաղարշ Վ.,** «Մանուկ Հայաստան», Գեղարուեստական քրոնիկ, *Հայաստանի կոչնակ,* Նիւ Եորք, 30.06.1923:

52 **Վրոյր Մ.,** Արշակ Ֆէթվաճեան (իր նկարահանդէսին առթիւ), *Հայրենիք,* Պոսթոն, 1932:

53 **Վրոյր Մ.,** Արշակ Ֆէթվաճեան..., Արշակ Ֆէթվաճեան, Հայ Մամուլի արտայայտութիւնները Արշակ Ֆէթվաճեանի մահուան առթիւ, «Ասպարէզ» թերթի խմբագրականը, ստորագրուած պրն. Ասատուր Խտրեանէ (ըստ՝ **Տէր-Մանուէլեան Ա.,** *Նկարիչ Արշակ Ֆետվաճեան, Արշակ Ֆէթվաճեանի կենսագրութիւնը,* Պեյրութ, Տպարան Սեւան, 1966, էջ 118):

54 Նկարիչ Ֆէթվաճեանի յոբելեանը, *Հայրենիք,* Պոսթոն, 11.10.1923:

ներից, որը պետք է ձևավորեր հիմնադրամ՝ հրատարակելու Ֆեթվաձյանի գործերը հայկական արվեստի և հատկապես ճարտարապետության մասին՝ մեր ժողովրդին և օտարներին ծանոթացնելու մեր գանձերի հետ ու հաջորդ սերունդներին փոխանցելու այն[55]: Այդպիսով, հանգանակությունը պիտի ունենար համազգային եւ ժողովրդական բնույթ, իսկ կազմակերպված զանազան մեծ կենտրոններում ցուցադրությունները նույն նպատակին պետք է ծառայեին[56]: 1931 թվականի վերջին Ա. Ֆեթվաձյանի որոշմամբ հոբելյանական հանձնախումբը դադարում է գոյություն ունենալ[57]:

Ամերիկայում սկզբնական շրջանում նա բնակություն է հաստատում Բոսթոնի Դուայթ փողոցի 20 հասցեում սառը, տխուր խուց հիշեցնող սենյակում, ուր արևը հազիվ էր ներս մտնում միակ պատուհանից. աշխուժորեն, տարիքի համեմատ զարմանալի եռանդով, գրասեղանի առջև աշխատում էր արվեստագետ-գիտնականը: Ամենուր թղթեր, ձեռագրեր, ճամպրուկներում՝ նկարազարդումներով հարուստ աշխատություններ՝ հայ և համաշխարհային մշակույթի վերաբերյալ: Այս խուցը հայ արվեստագետի և աշխատասենյակն էր, և ննջարանը, և խոհա-

55 Նույն տեղում:

56 Նույն տեղում:

57 Նյու Յորքում մի խումբ ազգայիններ, մեծապէս խանդավառուելով իր գործին ունեցած գեղարուեստական բարձր արժէքէն ու ազգային եւ պատմական նշանակութենէն, ուզեցին յարգել Յոբելեարը գոյացնելով 25.000 $-ի ֆընտ մը իր գործերուն հրատարակութեան համար: Այս հանձնախումբը մինչև 1925 վերջերը հարատև ջանքեր արեց առաջադրված նպատակը իրականացնելու համար և ունեցավ հետևյալ արդյունքը: Հրատարակուեց գըրքույկ, որը խնամքով պատրաստուած նախաբան մըն էր պ. Արշակ Ֆէթվաձեանի եւ իր գործը ներկայացնելու ժողովուրդին: Գրքույկից տպվեց 2500 օրինակ: Երկու նկարահանդես Չիկագո և Փրինսթն, հեղինակի լավագույն գործերը, որոնք ամերիկյան գեղարուեստական դժուարահաճ շրջանակներու բարձր գնահատութեան արժանացան: Պատրաստվեցին Ֆէթվաձեանի գեղեցկագոյն նկարների 12 սլայտ ապակեա, դասախոսության համար ու գունավոր նկարների կաղապարներ: Կենտրոնական հանձնախումբը փորձել է յանձնախմբեր կազմել Միացեալ Նահանգների բոլոր մեծ ու հայաշատ կենտրոններում, ու գրավոր անձնական դիմումներ է ուղակել այդ կենտրոնների աչքառու անձնավորություններին: Գրվել են նաև 100-ից ավելի հայերեն ու 50-ից ավելի անգլերեն նամակներ, դիմելով մասնաւոր անհատներին նվիրատվութեան համար: Տես *Հայրենիք,* 13.12.1931, Պոսթըն (նամակ խմբագրութեան 1923-ի ապրիլի 30-ին):

նոցը: Անբնական պայմանները նրան ստիպել էին դառնալ մռայլ, հոռետես, անտրամադիր, անվերջ գանգատներով, թթված ու դառնացած դեմքով մի մարդ, բայց իրեն համար անծանոթ բաներ էին չարությունն ու ոխակալությունը[58]: Ինչպես հայրենիքում, այնպես էլ տարագրության մեջ՝ Միացյալ Նահանգներում, նա մնաց «Խառնուածքով՝ կատարեալ արուեստագէտ մըն էր ան: Սիրահար լաւ ուտելիքներու, լաւ հագուելու: Միշտ մաքուր ու կոկիկ կը հագուէր՝ հակառակ իր ունեցած նիւթական համեստ ու սահմանափակ պայմաններին: Իր միտքն ու ձեռքերը անվերջօրէն ստեղծագործելով էին զբաղած ու տակաւին միշտ կը մտածէին աւելիին մասին:[59]: Խորաթափանց միտք, սուր տեսողութիւն եւ մանաւանդ ճարտար մատներ[60]: Ծայր աստիճան զուսպ էր եւ շատ սակաւախօս ու ժուժկալ՝ մարդոց մասին արտայայտուելու եւ իր կարծիքը հաղորդելու ժամանակ: Եզակի անձնաւորութիւն մըն էր իր հարուստ մտապաշարով, նկարելու բարձր արուեստով, կոկիկ հագուածքով ու նուրբ կենցաղավարութեամբ:»[61]:

Նրան հատկապես տխրեցնում էր, և նա չափազանց սուր էր զգում Միացյալ Նահանգներում առկա սոցիալական անարդարությունը, երբ համեմատում էր իր վաստակը մյուսների վաստակի հետ: Տեսնում էր, թե ուրիշները ինչպես են աշխատում, կյանքը վայելում, իսկ ինքը՝ վրստահ իր կարողության և ունեցած արժանիքների վրա, «կարծէք միշտ կը հալածուէի բախտէն՝ ամէն տեղ: Ինձմէ պակաս շնորհ ունեցողներ ամէն օր հաւ կ'ուտէին, մետաքս շապիկ կը հագնէին եւ ծանրարժէք սիկառներ կը ծխէին, իսկ ինծի վիճակուած էր անգործութիւնը միայն, բախտին լքուած՝ անորոշ ճակատագիր մը, եւ կեանքս այսպէս քարշ կու տայի Լեքսինկթըն պողոտայի վրայ գտնուող պանդոկի մը մութ ու նեղ խցիկին մէջ, փոշիներով ու մուրով ծածկուած: Ես, որ երիտասարդութեանս ամենէն գեղեցիկ տարիները նուիրաբերեր եմ հայ հանճարին պատմական ստեղծագործութիւնները նկարելու եւ երեւան բերեր եմ կոթողական գործ մը, որուն մասին ինձմէ առաջ ոչ ոք է մտածած»[62]:

---

58 **Տէր-Մանուէլեան Ա.,** *Նկարիչ Արշակ Ֆետվաճյան, Արշակ Ֆէթվաճեանի կենսագրութիւնը*..., էջ 20-23:

59 Նույն տեղում, էջ 19:

60 Նույն տեղում, էջ 120:

61 Նույն տեղում, էջ 79:

62 Նույն տեղում, էջ 25:

Այդ շրջանում ամերիկաբնակ տեր և տիկին Մանվելյանների հրավերով Ֆեթվաճյանը Նյու Յորքից փոխադրվում է Բոստոն, որը բարենպաստ է ազդում նրա հոգեվիճակի վրա: Նրան մեծահոգաբար էին հյուրընկալել՝ մտերմիկ զրույցներով համեմված, այլ հյուրերի հետ միասին Արևելքի հատուկ հյուրասիրությամբ պատրաստված ճոխ սեղանների շուրջ[63]: Մի անկեղծ զրույցի ժամանակ Մանվել Մանվելյանը խորհուրդ է տալիս Ֆեթվաճյանին մոռանալ Հարվարդի կամ Վենետիկի մասին, հույս չդնել նրանց վրա գործերը հրատարակելու համար, որը արվեստագետ-հետազոտողի համար երազ ու իդեալ էր. փոխարենը ամբողջը նվիրաբերել Հայաստանի պետական թանգարանին[64]: «Հայրենիքն է անոնց տեղը, Հայաստանի պետական թանգարանը, ուր պիտի ունենան իրենց պատուոյ տեղերը»[65]: Մանվելյանը ձեռնարկեց Ֆեթվաճյանի հայրենադարձության գործընթացը, բայց այդ օրերին հայրենիք կարող էին վերադառնալ միայն պաշտոնական պատճառներ և/ կամ կաթողիկոսական ընտրության հրավեր ունեցողները[66]:

Կյանքի վերջին տարիները «հնագէտ-արթիստը»[67], «հայ ցեղի արժանաւոր զաւակ մը, վրձնի հոյակապ վարպետը»[68] մշտապես Մանվելյան ընտանիքի հոգածության և ուշադրության կենտրոնում էր: Վատառողջ լինելու պատճառով Ֆեթվաճյանը չէր ցանկանում նրանց անհանգստություն պատճառել և տեղափոխվում է Մէտֆըրտ Չէսթ Հոմ՝ արևոտ սենյակ, ընդարձակ, լուսավոր, խոշոր պատուհաններ, մշտական ջրով ու տաքությամբ, ամեն տեսակ հարմարություններով[69]: Նույնիսկ հիվանդ վիճակում Ֆեթվաճյանը սթափ գիտակցության և տրամաբանության տեր էր[70]: Նա մահացավ 1947 թվականի հոկտեմբերի 7-ի առավոտյան: Ութերթաուն քաղաքի Սուրբ Հակոբ եկեղեցու թաղման արարողությունից հետո բանկից հանեցին Ֆեթվաճյանի բոլոր նկարներն ու ազգագրական գործերը և փայտե ճամպրուկների

63 Նույն տեղում, էջ 32:
64 Նույն տեղում, էջ 34:
65 Նույն տեղում, էջ 35:
66 Նույն տեղում, էջ 44:
67 **Դիմաքաեան Ե.,** Հայ արուեստագէտ մը Ամերիկայի մէջ, *Հայրենիք,* Պոսթոն, 10.10.1925:
68 Նկարիչը եւ «Մանուկ Հայաստան»...
69 **Տէր- Մանուէլեան Ա.,** *Արշակ Ֆէթվաճեանի կենսագրութիւնը*..., էջ 94-95:
70 Նույն տեղում, էջ 90:

մեջ դրված աճյունի հետ միասին փոխադրեցին Հայաստան: «Ոսկի սրտով, ճշմարիտ հայրենասէրի բաբախուն հոգիով, արուեստագէտ և վաստակաւոր հայ մը՝ ալ կ'իջնէ գերեզման, 84 տարիներու բեռը ուսերուն, այլ իր կոչումը լրիւ իրագործած, իր տուրքը իր ժողովուրդին լրիւ հատուցած, արուեստի ու բանասիրութեան լրիւ ծառայած հայ մը[71]: Նա թաղվեց «հայ արուեստի պանթեոնում, նկարիչներու թաղին մէջ, նկարիչ Աղաջանեանի քովը»[72]: Խորհրդային Հայաստանում հետմահու առաջին ցուցահանդեսը կայացավ Հայաստանի պետական պատկերասրահում 1956 թվականի օգոստոսի 26-ին:

Նա կարող էր լինել Խորհրդային Հայաստան վերադարձող հայրենադարձների առաջին նավերից մեկում, սակայն 25 տարի շարունակեց ծառայել հայրենիքին օվկիանոսից այն կողմ՝ Միացյալ Նահանգների լավագույն համալսարաններում ներկայացնելով տասնամյակների իր անձնուրաց գիտական, հետազոտական աշխատանքը:

ՀԱՊ հուշաձեռագրային բաժնի արխիվավար, տողերիս հեղինակը, արժևորելով Ֆեթվաճյանի գրավոր գիտական ժառանգությունը, անտիպ հայալեզու աշխատությունները, ցանկանալով իր մասնակի ներդրումն ունենալ նրա ժառանգության հասանելիության, մատչելիության ապահովման գործում, ստեղծել է համակարգչային շարվածք՝ առաջին հատորում մեկտեղելով հայ և համաշխարհային մշակույթի մասին, իսկ երկրորդում՝ հոդվածները, ելույթները, խոհերը, բանաստեղծությունները[73]: Երկհատորյակի հրատարակումը նպատակահարմար ենք տեսնում առցանց հարթակում՝ հնարավորինս շատերին հնարավորություն տալով ծանոթանալու աշխատանքին: Նմանօրինակ կարելի է ներկայացնել Ֆեթվաճյանի ձեռագիր, հայալեզու, տեղ-տեղ օտարալեզու հատվածներով մեջբերվող համաշխարհային արվեստի յոթհատորյակը բաղկացած և «Հայ գրքի գեղարվեստը» երկհատորյա ձեռագիր աշխատությունները, որոնք կնպաստեն Արշակ Ֆեթվաճյանի դեռևս անհայտ գիտական գործունեության հանրայնացմանը:

---

71 Հայ Մամուլի արտայայտութիւնները Արշակ Ֆէթվաճեանի մահուան առթիւ (ըստ՝ **Տէր-Մանուէլեան Ա.,** *Արշակ Ֆէթվաճեանի կենսագրութիւնը*..., էջ 119):

72 Նկարիչ-բանասէր Արշակ Ֆէթվաճեանի աճիւնները փառքով ու պատուով կը տարուին հայ արուեստի պանթէոնը, «Լրաբեր» թերթէն (ըստ՝ **Տէր-Մանուէլեան Ա.,** *Արշակ Ֆէթվաճեանի կենսագրութիւնը*..., էջ 122):

73 Բանաստեղծությունների համակարգչային շարվածքը՝ ՀԱՊ գծանկարի ֆոնդի ֆոնդապահ, արվեստաբան Գոհար Չեմենյանի (*Հ.Դ.*):

UNPUBLISHED PAGES FROM ARSHAK FETVADJIAN'S ARCHIVE

HRIPSIME DAYAN
State Academy of Fine Arts of Armenia
National Gallery of Armenia

Abstract

This article presents, for the first time, archival materials relating to Arshak Fetvadjian's life and activity. Some of them are unique, previously unpublished ones newly representing him as a scholar, thinker, public figure and researcher of Armenian culture. The "fruits" of his travels in the Armenian Highland are about 2,000 paintings depicting Armenian monuments, both standing and ruined, as well as Armenian women and jewellery. In the first half of the 20th century, these works were presented at the best exhibitions in Europe and the USA. An eyewitness to the events that took place during and after the Genocide, Arshak Fetvadjian published a number of articles expressing his attitude towards those tragic pages of Armenian history. He also organized humanitarian aid to support Armenian orphans and the survivors of the Genocide. The article also enlarges on the American period of Fetvadjian's creative activities, revealing him as a thinker and scholar, and also describing his endeavours to return to his homeland. We have also studied memoirs and articles about this scholar and the artist published in the United States, highlighting opinions about him and assessment of his works.

Keywords: Arshag Fetvadjian, Armenian Genocide 1915, Arshag Fetvadjian in the United States of America, Armenian Highland, architectural monuments in Armenian art, the figure of 'Infant Armenia'

НЕИЗДАННЫЕ СТРАНИЦЫ ИЗ АРХИВА АРШАКА ФЕТВАЧЯНА

РИПСИМЕ ДАЯН
Государственная академии художеств Армении
Национальная галерея Армении

Резюме

В данной статье впервые представлены архивные материалы, связанные с жизнью и творчеством Аршака Фетвачяна, в том числе уникальные, по-новому раскрывыющие его как ученого, мыслителя, общественного деятеля и исследователя армянской культуры. Результатом его странствий по Армянскому Нагорью явилось около 2000 различных архитектурных памятников Армении, найденных как в сохранившихся, так и в руинах, фигур и украшений армянских женщин, которые были представлены на лучших выставках Европы и США в первой половине XX века. Аршак Фетвачян был очевидцем событий, развернувшихся во время и после Геноцида, свое отношение к которым он выразил не только в своих статьях, но и организовал гуманитарную помощь в поддержку сирот и беженцев, переживших Геноцид. Представлены творческие достижения Фетвачяна в американский период как мыслителя, ученого, его стремление и попытки вернуться на родину. В статье также приведены оценки и квалификации Фетвачяна, выделенные из опубликованных в США статей и воспоминаний об ученом-художнике.

Ключевые слова: Аршак Фетвачян, Геноцид Армян 1915 года, Аршак Фетвачян в Соединенных Штатах Америки, Армянское Нагорье, Архитектурные памятники в армянском изобразительном искусстве, образ «Младенца Армении»

Գրականության ցանկ

1. ՀԱՊ, Հուշաձեռագրային բաժին, Ֆ.144, ինվ. 39901:
2. Ազգային գեղարուեստի թանգարան, *Հորիզոն*, Թիֆլիս, 17.12.1915:
3. Ամերիկահայ կեանք, մի՛ փախցնէք առիթը, Ֆիլատելֆիայի հայերու ուշատրութեան, *Հայրենիք*, Պոսթոն, 08.10.1934:
4. **Դիմաքայան Ե.**, Հայ արուեստագէտ մը Ամերիկայի մէջ, *Հայրենիք*, Պոսթոն, 10.10.1925:
5. ԵՊՀ Հայագիտության հետազոտությունների ինստիտուտ, Հայոց ցեղասպանության հանրագիտարան http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_Fetvachyan_Arshak (վերջին այցելությունը՝ 24.11.2023)
6. **Կիրակոսյան Ջ.**, *Երիտթուրքերը պատմության դատարանի առաջ,* գիրք 1-ին և 2-րդ, Երևան, «Հայաստան», 1982-1983:
7. Հայ տաղանդը եւ գեղարուեստը Շիքակոյի համալսարանին մէջ, *Հայաստանի կոչնակ*, Նիւ Եորք, 29.09.1923:
8. Հայկական ճարտարապետութիւնը եւ Պ-ն Ա. Ֆէթվաճեանի գործերը, *Հայրենիք*, Պոսթոն, 01.01.1925:
9. **Տէր-Մանուէլեան Ա.**, *Նկարիչ Արշակ Ֆեթվաճեան. Արշակ Ֆէթվաճեանի կենսագրութիւնը,* Պեյրութ, Տպարան Սեւան, 1966:
10. Նկարիչ Ֆէթվաճեանի յոբելեանը, *Հայրենիք*, Պոսթոն, 11.10.1923:
11. Նկարիչը եւ «Մանուկ Հայաստան»-ը, *Նոր օր*, Ֆրեզնո, Ալտադենա, 03.07.1923:
12. **Շիշմանեան Ռ.**, Ֆրանկարիչներու միջազգ. ընկերութեան ցուցհանդէսը, *Վերածնունդ*, Փարիզ, 30.10.1920:
13. Շնորհաւորելի աշխատասիրութիւն մը. մագաղաթի վրայ հայ ձեռագիր գիրքերու գեղարուեստը, *Հայրենիք*, Պոսթոն, 10.1927:
14. **Չեմենյան Գ.**, *Ֆեթվաճյան Արշակ, գեղանկար, գրաֆիկա*, Երևան, ՀԱՊ, հրատ., 2008:
15. **Չեմենյան Գ.**, ***Ֆեթվաճյան Արշակ. մշակույթին եղեռնից փրկված ճարտարապետական մասունքներ,*** Երևան, ՀԱՊ հրատ., 2015:
16. **Չուգասզյան Լ.**, *Արշակ Ֆեթվաճյան,* Երևան,, Փրինթինֆո, 2011:
17. **Պետիկեան Ա. Ա.**, Ֆէթվաճեանի «Նուիրաբերութիւնը», *Պայքար*, Պոսթոն, 27.06.1947:
18. Պ-ն Ա. Ֆէթվաճեանի դասախօսութիւնը, *Հայրենիք*, Պոսթոն, 18.12.1924:
19. **Վաղարշ Վ.**, «Մանուկ Հայաստան», Գեղարուեստական քրոնիկ,

Հայաստանի Կոչնակ, Նիւ Եորք, 30.06.1923:
20. **Վերածին Մ.**, Հայաստանի նամակադրոշմներն եւ Ա. Ֆէթվաճեանը, *Հայ Վաստակ*, Պոսթոն, 08, 05.1932:
21. **Վրոյր Մ.**, Արշակ Ֆէթվաճեան (իր նկարահանդէսին առթիւ), *Հայրենիք,* Պոսթոն, 1932:
22. **Տէր-Գրիգորեան Ռ.**, Ա. Ֆեթվաճեանի ցուցահանդէսը Պարիզում, *Նոր աշխատաւոր*, Թիֆլիս, 23.06.1920:
23. **Քալանթար Նալբանդեան Վ.**, Ֆէթվաճեան ամերիկացիներու մէջ, *Հայաստանի կոչնակ*, Նիւ Եորք, 12.01.1924:
24. **Ֆեթվաճեան Ա.**, Գեղարուեստը հայերի մէջ, *Մշակ*, Թիֆլիս, 04.07.1902:
25. **Ֆէթվաճեան Ա.**, «Մանուկ Հայաստան»-ի առթիվ, *Հայաստանի կոչնակ*, Նիւ Եորք, 29.09.1923:
26. **Ֆէթվաճեան Ա.**, Ի խորոց սրտի, *Զանգ*, Երեւան, 05.01.1919:
27. **Ֆէթվաճեան Ա.**, Իմ հանդիպումները Խրիմեանի հետ (I), *Հայրենիք*, Պոսթոն, 13.11.1932
28. **Ֆէթվաճեան Ա.**, Կ. Խաչ պատմութեան համար (Կ. Խաչի 25-ամեակի առթիւ), *Հայրենիք,* Պոսթոն, 06.03.1935:
29. **Ֆէթվաճյան Ա.**, Մենք մեզ պիտի օգնենք. Հայ հեղափոխութիւնը չի վերջացաւ. Գ., *Յուսաբեր*, Գահիրէ, 05.08.1920:
30. **Basmadjian** K. J., Un maitre arménien, Archag Fétvadjian, *L'orient illustre*, Paris, 25.07.1929.
31. Armenian Architecture, *Glasgow Herald*, Glasgow, 10.11.1921.
32. Arshag Fetvadjian to Visit America, *The Christian Science Monitor*, USA, 03.08.1922.
33. Exposition Fétvadjian, *Bulletin arméniene*, 15.10.1919.
34. Noted artist complies monumental work, Fetvajian to lecture on archeology. By a staff correspondent of the Hairenik Weekly, *Hairenik Weekly*, Boston, Mass., 06.12.1935.
35. Fetvajian gives colorful lecture to A.R.F. students, *Hairenik Weekly*, Boston, Mass., 20.12.1935:
36. Paintings in Metropolitan work of famous artist who won distinction in Europe. *Leominister daily enterprise*, Leominster, Mass., 18.05.1929.

Նկարների ցանկ

1. Արշակ Ֆեթվաճյան, 1904 թ., Կազանջյան լուսանկարչատուն, ՀԱՊ, Հուշաձեռագրային բաժին, © Հայաստանի ազգային պատկերասրահ
2. «Մանուկ Հայաստան», Արշակ Ֆեթվաճյան, 1903 թ., 83x109 սմ, թուղթ, ջրաներկ, ՀԱՊ հավաքածու, © Հայաստանի ազգային պատկերասրահ

1

2